

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 4-ի «Ռադիոակտիվ թափոնների կառավարման կարգը հաստատելու մասին» N 631-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները՝

1) 2-րդ կետի 9-րդ ենթակետում «ռադիոգիական» բառը փոխարինել «ճառագայթային» բառով.  
2) 2-րդ կետը 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝  
10-24-րդ ենթակետերով.

«10) ռադիոակտիվ թափոնների բնութագրում՝ ռադիոակտիվ թափոնների ճառագայթային, ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկությունների որոշում՝ ուղղված հաստատելու դրանց հետագա մշակման և կոնդիցիայի բերման անհրաժեշտությունը կամ դրանց համապատասխանությունը փոխադրման, վերամշակման, պահման և թաղման ընդունելիության չափանիշներին կամ կարգավորող վերահսկողությունից դուրսբերման մակարդակներին.

11) հիմնական ռադիոակտիվ իզոտոպ կամ հեշտությամբ չափելի ռադիոակտիվ իզոտոպ կամ մարկերային ռադիոիզոտոպ՝ գամմա ճառագայթող ռադիոակտիվ

իզոտոպ, որի ուղիութիվությունը փոխապակցված է դժվար չափելի ուղիութուաների ուղիութիվությանը և կարող է հեշտությամբ չափել չքայլայող վերլուծության միջոցներով.

12) դժվար չափելի ուղիութիվ իզոտոպ՝ իզոտոպ, որի ուղիութիվությունը չքայլայող վերլուծության միջոցներով դժվար է անմիջականորեն չափել թափոնների փաթեթների արտաքին մակերևույթից, օրինակ, ալֆա և մաքուր բետոտ ճառագայթող ուղիութիվ իզոտոպներ, ցածր էներգիայով գամմա ճառագայթող ուղիութիվ իզոտոպներ և իզոտոպների բնութագրական ռենտգենյան ճառագայթում.

13) կշռային գործոն՝ մաթեմատիկական հարաբերակցության արդյունքում ստացված գործակից, որն օգտագործվում է դժվար չափելի ուղիութիվ իզոտոպների ուղիութիվության հաշվարկման համար՝ հիմնվելով նմուշառման և վերլուծության տվյալների արդյունքում որոշված հեշտությամբ չափելի ուղիութիվ իզոտոպների ուղիութիվության վրա.

14) քայլայող վերլուծություն՝ չմշակված ուղիութիվ թափոնի կամ թափոնի ձևի քիմիական և ուղիորդիմիական մշակում (նմուշառում, նմուշի նախապատրաստում և քիմիական բաժանման մեթոդների կիրառում)՝ չափելու համար հետազոտվող նյութում մեկ կամ ավելի ուղիութուաների պարունակությունը և դրանցից յուրաքանչյուրի ակտիվությունը.

15) չքայլայող վերլուծություն՝ վերլուծություն, որը հիմնված է սպոնտան (ինքնաբերաբար կատարվող) կամ խթանված ատոմի միջուկի ճառագայթման դիտարկման վրա՝ գնահատելու համար հետազոտվող նյութում մեկ կամ ավելի ուղիութուաների պարունակությունը՝ առանց ազդելու նյութի ֆիզիկական կամ քիմիական ձևի վրա.

16) ներկայացնեցական փորձանմուշ՝ տվյալ գործընթացում նյութից վերցված նմուշ կամ նյութի այնպիսի քանակություն, որն ունի թափոնների տվյալ հոսքի հատկանիշները (բնութագրերը)՝ ուղիութուաների պարունակությունը և ուղիութուաների ակտիվությունների համամասնությունները.

17) բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպներ (բնական ճառագայթման աղբյուր՝<sup>40</sup>K, <sup>235</sup>U, <sup>238</sup>U, <sup>232</sup>Th ռադիո-իզոտոպների, որոնք բնական պայմաններում հանդիպում են զգալի քանակությամբ (հասկացությունը սովորաբար կիրառվում է <sup>40</sup>K, <sup>235</sup>U, <sup>238</sup>U, <sup>232</sup>Th ռադիո-իզոտոպների, դրանց տրոհման արդյունքների և բնական ակտիվացման գործընթացներից առաջացած <sup>3</sup>H և <sup>14</sup>C ռադիոիզոտոպների նկատմամբ՝ ի հակադարձում «անթրոպոգեն ռադիոակտիվ իզոտոպներ» հասկացության).

18) բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութ-թափոն’ բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ, որը չի նախատեսվում օգտագործել հետագայում որևէ նպատակով.

19) բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութ’ նյութ, որը չի պարունակում բնական ծագմամբ ռադիոիզոտոպներից տարրեր՝ զգալի քանակությամբ ռադիոիզոտոպներ: Բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութ’ են համարվում նաև տեխնիկապես հարստացված՝ բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութերը’, որոնցում բնական ծագմամբ ռադիոակտիվ իզոտոպների տեսակարար ակտիվությունները ենթարկվել են փոփոխության՝ անթրոպոգեն գործունեության արդյունքում.

20) բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութի մնացորդ’ նյութ, որն առաջանում է անթրոպոգեն գործունեության արդյունքում և պարունակում է բնական ծագմամբ ռադիոակտիվ նյութ կամ աղտոտված է բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութով’: Բնական ծագմամբ ռադիոակտիվ ‘նյութի մնացորդը կարող է ճանաչվել և կառավարվել որպես թափոն.

21) ռադիոակտիվ թափոնի կայունություն՝ ռադիոակտիվ թափոնի ձևի և թափոնի փաթեթի ունակությունը շուրջ հարյուր տարի գոյություն ունենալով՝ պահպանել իր նախնական որակը և հատկությունները: Ներառում է թափոնի ձևի և թափոնի փաթեթի ճառագայթային, քիմիական ու մեխանիկական կայունությունը.

22) ճառագայթային կայունություն՝ թափոնի ձևի և թափոնի փաթեթի կարողությունը՝ դիմակայելու ճառագայթման ազդեցությանը (կարճաժամկետ և երկարաժամկետ)՝ առանց թափոնի ձևի, ֆիզիկական կամ մոլեկուլային հատկությունների, թափոնի փաթեթի ամրողականության փոփոխության.

23) քիմիական կայունություն՝ նյութի լուծման արագությունը կամ նյութի էրոզիայի արագությունը կամ պինդ նյութից դիֆուզիայի եղանակով ազատման արագությունը, որը թափոնի ձևից և թափոնի փաթեթից ռադիոնուկլիդների միզրացիայի արագության չափման միավոր է.

24) մեխանիկական կայունություն՝ թափոնի փաթեթի կարողությունը՝ դիմակայելու դրա կառավարման ժամանակ հնարավոր մեխանիկական ազդեցություններին, որոնք առաջանում են թափոնի փաթեթի փոխադրման, բեռնաթափակման, պահման, գերեզմանոցում տեղադրման ժամանակ՝ բնականոն իրավիճակներում և բնականոն իրավիճակներից տարբեր՝ կանխատեսելի իրավիճակներում.».

3) 10.1-ին կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.2-10.9-րդ կետերով.

«10.2. Ռադիոակտիվ թափոններն ըստ ծագման բաժանվում են՝

1) միջուկային վառելիքային ցիկլում առաջացած ռադիոակտիվ թափոնների.

2) ռադիոակտիվ իզոտոպների արտադրությունից և գիտության, արդյունաբերության, կրթության և բժշկության բնագավառներում առաջացած ռադիոակտիվ թափոնների.

3) հանքարդյունահանման և հանքամշակման ժամանակ առաջացած ռադիոակտիվ թափոնների:

10.3. Ռադիոակտիվ թափոնը, թափոնի ձևը և թափոնի փաթեթը պետք է բնութագրվեն ռադիոակտիվ թափոնների կառավարման յուրաքանչյուր փուլում:

10.4. Ռադիոակտիվ թափոնը բնութագրվում է՝

1) ըստ ճառագայթային հատկությունների՝

ա. գումարային ակտիվությունը՝ ներառյալ դժվար չափելի ռադիոակտիվ իզոտոպների ակտիվությունը,

բ. տեսակարար ակտիվությունը՝ ներառյալ դժվար չափելի ռադիոակտիվ իզոտոպների տեսակարար ակտիվությունը,

շ. ռադիոիզոտոպային կազմը՝ ներառյալ կիսատրոհման պարբերությունը և ճառագայթման տեսակը,

դ. գամմա ճառագայթման դոզայի հզորությունը,

ե. մակերեսային ռադիոակտիվ աղտոտվածությունը և տեսակը (ֆիքսված կամ չֆիքսված),

զ. տրոհվող նյութերի առկայությունը և քանակը,

է. ջերմագոյացումը,

ը. ռադիոակտիվության բնույթը (ռադիոակտիվ աղտոտվածություն կամ ակտիվացում).

2) ֆիզիկաքիմիական հատկությունների՝

ա. ազրեգատային վիճակը (պինդ, հեղուկ, գազային),

բ. ծավալը, զանգվածը, երկրաչափական չափսերը,

գ. խտությունը,

դ. ցնդելիությունը,

ե. քիմիական բաղադրությունը,

զ. հրդեհավտանգավորությունը և ջերմակայունությունը,

է. քիմիական համատեղելիությունը,

ը. պայթյունավտանգավորությունը,

թ. գագերի առաջացումը,

ժ. թթվայնությունը (pH-ը),

ժա. թունավորությունը.

3) ըստ կենսաբանական հատկությունների՝

ա. փտող նյութերի առկայությունը,

բ. վարակիչ և պաթոգեն նյութերի առկայությունը:

10.5. Բնական ծագմամբ ուղիղակտիվ նյութ-թափոնի բնութագրման ժամանակ, ինչպես նաև բնական ծագմամբ ուղիղակտիվ նյութի մնացորդի՝ որպես ուղիղակտիվ թափոն կառավարելու վերաբերյալ որոշման ընդունման դեպքում չափվում է նաև ծանր մետաղների պարունակությունը:

10.6. Ուղիղակտիվ թափոնի ձևի և թափոնի փաթեթի բնութագրումը ներառում է՝

1) ըստ ճառագայթային հատկությունների՝

ա. գումարային ակտիվությունը՝ ներառյալ դժվար չափելի ուղիղիզոտոպների ակտիվությունը,

բ. ուղիղակտիվ իզոտոպային կազմ՝ ներառյալ կարճ ապրող ուղիղիզոտոպների հարաբերությունը երկար ապրող ուղիղիզոտոպներին,

գ. գամմա ճառագայթման դոզայի հզորությունը,

դ. մակերեսային աղտոտվածությունը,

ե. տրոհվող նյութերի առկայությունը,

զ. ջերմագոյացումը.

է. ճառագայթային կայունությունը.

2) ըստ ֆիզիկաքիմիական հատկությունների՝

ա. գանգվածը,

բ. կառուցվածքային և ծավալային կայունությունը,

գ. թափանցելիությունը և ծակոտկենությունը,

դ. խտությունը,

ե. դատարկ (չզբաղեցված) ընդհանուր ծավալը,

- գ. մեխանիկական կայունությունը,
- է. արտաքին ազդեցության, ծանրաբեռնվածության նկատմամբ դիմադրողականությունը,
- լ. միատարրությունը,
- թ. քիմիական կայունությունը,
- ժ. քիմիական բաղադրությունը,
- ԺԱ. կոռոզիայի նկատմամբ կայունությունը,
- ԺԲ. պայթյունավտանգավորությունը,
- ԺԳ. գազերի առաջացումը,
- ԺԴ. թունավորությունը,
- ԺԵ. հրդեհակայունությունը:

10.7. Ատոմային էլեկտրակայանում առաջացած ռադիոակտիվ թափոններում բնութագրման ենթակա ռադիոակտիվ իզոտոպների ցանկը (ներառյալ դժվար չափելի ռադիոակտիվ իզոտոպները) ներկայացված է N 1 աղյուսակում:

**Աղյուսակ N 1. Ցանկ ատոմային էլեկտրակայանում առաջացած ռադիոակտիվ թափոններում բնութագրման ենթակա ռադիոակտիվ իզոտոպների**

Ռադիոակտիվ իզոտոպը	Կիսատրոհման պարբերականությունը	Հիմնական ճառագայթման տևակը	Առաջացման հիմնական մեխանիզմը
1	2	3	4
H-3	12.3 տարի	$\beta^-$ ( $E_{\max}=18.6 \text{ keV}$ )	Li-6( $n, a$ ) H-2( $n, \gamma$ ) միջուկի եռակի տրոհում
C-14	5730 տարի	$\beta^-$ ( $E_{\max}=156 \text{ keV}$ )	C-13( $n, \gamma$ ) N-14( $n, p$ ) O-17( $n, a$ )
Cl-36	$3.01 \times 10^5$ տարի	$\beta^-$ ( $E_{\max}=708.6 \text{ keV}$ )	Cl-35( $n, \gamma$ ) Ca-40( $n, \gamma$ )
Ca-41	$1.03 \times 10^5$ տարի	$e^-$ (2.97 keV) X (3.31 keV) X (3.59 keV)	Ca-40( $n, \gamma$ )
Mn-54	312 օր	$\gamma$ (835 keV) X (5.4 keV) X (5.9 keV)	Fe-54( $n, p$ )
Fe-55	2.74 տարի	X (5.90 keV) X (6.49 keV)	Fe-54( $n, \gamma$ )
Ni-59	$7.6 \times 10^4$ տարի	X (6.93 keV) X (7.65 keV)	Ni-58( $n, \gamma$ )

1	2	3	4
Co-60	5.27 տարի	$\gamma$ (1173.2 keV) $\gamma$ (1332.5 keV)	Co-59(n, $\gamma$ )
Ni-63	100.1 տարի	$\beta^-$ ( $E_{max}$ =66.9 keV)	Ni-62(n, $\gamma$ )
Se-79	$2.95 \times 10^5$ տարի	$\beta^-$ ( $E_{max}$ =151 keV)	միջուկի տրոհում տրոհման արգասիքի ակտիվացնո՞ւմ Se-78(n, $\gamma$ )
Sr-90	28.9 տարի	$\beta^-$ ( $E_{max}$ =546 keV)	միջուկի տրոհում
Nb-94	$2.03 \times 10^4$ տարի	$\gamma$ (702.6 keV) $\gamma$ (871.1 keV)	Nb-93(n, $\gamma$ )
Tc-99	$2.11 \times 10^5$ տարի	$\beta^-$ ( $E_{max}$ =293.5 keV)	միջուկի տրոհում Mo-98(n, $\gamma$ ) Mo-99( $\beta^-$ )
Ru-106	373.6 op	$\gamma$ (511.9 keV) <sup>a</sup> $\gamma$ (621.9 keV) <sup>a</sup> $\gamma$ (1050.4 keV) <sup>a</sup>	միջուկի տրոհում
Ag-110m	250 op	$\gamma$ (660 keV) $\gamma$ (880 keV) $\gamma$ (940 keV) $\gamma$ (1380 keV) X (23.2 keV) X (21.9 keV) X (24.9 keV) X (25.5 keV)	Ag-109(n, $\gamma$ )
Sb-125	2.76 տարի	$\gamma$ (427.9 keV) $\gamma$ (600.6 keV) $\gamma$ (635.9 keV)	միջուկի տրոհում Sn-124(n, $\gamma$ ) Sn-125( $\beta^-$ )
I-129	$1.57 \times 10^7$ տարի	X (29.8 keV) X (29.5 keV) X (33.6 keV) $\gamma$ (39.6 keV) X (34.4 keV)	միջուկի տրոհում
Cs-135	$2.3 \times 10^6$ տարի	$\beta^-$ ( $E_{max}$ =268.7 keV)	միջուկի տրոհում
Cs-137	30.08 տարի	$\gamma$ (661.6 keV)	միջուկի տրոհում
Ce-144	284.9 op	$\gamma$ (133.5 keV) $\gamma$ (696.5 keV) <sup>a</sup> $\gamma$ (80.1 keV) $\gamma$ (2185.7 keV) <sup>a</sup>	միջուկի տրոհում
U-235	$7.04 \times 10^8$ տարի	$a$ (4.398 MeV) $a$ (4.366 MeV) $a$ (4.215 MeV) $\gamma$ (185.7 keV) $\gamma$ (143.8 keV)	բնական ծագմամբ
Np-237	$2.14 \times 10^6$ տարի	$a$ (4.788 MeV) $a$ (4.771 MeV) $a$ (4.767 MeV) $\gamma$ (29.4 keV) $\gamma$ (86.5 keV)	U-235(n, $\gamma$ ) U-236(n, $\gamma$ ) U-237( $\beta^-$ )
U-238	$4.47 \times 10^9$ տարի	$a$ (4.198 MeV) $a$ (4.151 MeV)	բնական ծագմամբ

1	2	3	4
Pu-238	87.7 տարի	$a$ (5.499 MeV) $a$ (5.456 MeV)	Np-237(n, $\gamma$ ) Np-238( $\beta^-$ ) Cm-242(a)
Pu-239	24 110 տարի	$a$ (5.157 MeV) $a$ (5.144 MeV)	U-238(n, $\gamma$ ) U-239( $\beta^-$ ) Np-239( $\beta^-$ )
Pu-240	6561 տարի	$a$ (5.168 MeV) $a$ (5.124 MeV)	նեյտրոնների բազմակի կլանում
Pu-241	14.29 տարի	$\beta^-$ ( $E_{\max}=20.78$ keV) $a$ (4.896 MeV) $a$ (4.853 MeV)	նեյտրոնների բազմակի կլանում
Am-241	432.6 տարի	$a$ (5.486 MeV) $a$ (5.443 MeV) $\gamma$ (59.5 keV) $\gamma$ (26.3 keV)	Pu-241( $\beta^-$ )
Pu-242	$3.75 \times 10^5$ տարի	$a$ (4.902 MeV) $a$ (4.858 MeV)	նեյտրոնների բազմակի կլանում
Cm-242	162.8օր	$a$ (6.113 MeV) $a$ (6.069 MeV)	նեյտրոնների բազմակի կլանում, որին հաջորդում է Am-242( $\beta^-$ )
Cm-243	29.1 տարի	$a$ (5.785 MeV) $a$ (5.742 MeV) $a$ (5.992 MeV)	նեյտրոնների բազմակի կլանում
Cm-244	18.1 տարի	$a$ (5.805 MeV) $a$ (5.763 MeV)	նեյտրոնների բազմակի կլանում

<sup>a</sup> - կարճ ապրող դուստր ռադիոակտիվ իզոտոպի տրոհման էներգիան:

10.8. Ռադիոակտիվ թափոնի, թափոնի ձևի, թափոնի փաթեթի բնութագրման մեթոդը՝ ներառյալ բնութագրման համար ընտրված փորձանմուշի ներկայացուցչական լինելու հիմնավորումը, դժվար չափելի ռադիոակտիվ իզոտոպների բնութագրման համար ընտրված կշռային գործակցի հաշվարկման եղանակը և հիմնավորումը համաձայնեցվում են կարգավորող մարմնի հետ:

10.9. Ռադիոակտիվ թափոնի, թափոնի ձևի, թափոնի փաթեթի բնութագրման տվյալներն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի լիցենզավորված անձանց կողմից գրանցվում են թղթային և էլեկտրոնային գրանցամատյաններում և պահպանվում են մինչև թափոնների կառավարման տեղակայանքի շահագործման ավարտը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: